ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին մասին

ԵԴ2/3632/02/24 ք. Երևան
17 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արշակ Պետրոսյանի, ծանոթանալով «Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ պարտավորեցնելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/9Շ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը անբավարար գնահատելու և մերժելու, և որպես հետևանք՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ պարտավորեցնելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/9Շ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը անբավարար գնահատելու և մերժելու, և որպես հետևանք՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին, որը Դատարանին հասանելի է դարձել 14.05.2024թ.:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Նույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
Վերոնշյալ հոդվածների իրավակարգավորումներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ ներքին գործերի նախարարությանից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2024/9Շ» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Միևնույն ժամանակ Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ պատասխանողը կարող է ներկայացնել թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2024/9Շ» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված ապացույցներ միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200, 234.5 հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ պարտավորեցնելու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱԾՁԲ-2024/9Շ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը անբավարար գնահատելու և մերժելու, և որպես հետևանք՝ գնման ընթացակարգը չկայացած

հայտարարելու պահանջների մասին, ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/3632/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. հունիսի 28-ին:
4. ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/9Շ» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
5. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 4-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Արշակ Պետրոսյան

Digitally signed by PETROSYAN ARSHAK

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am